ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՐՈՇՈՒՄ

ՓԱՍՏԱԲԱՆ ԿԱՐԱՊԵՏ ԱՂԱՋԱՆՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹ ՀԱՐՈՒՑԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քննության առնելով զանգվածային լրատվության միջոցի հրապարակման հիման վրա փաստաբան Կարապետ Աղաջանյանի (արտոնագիր թիվ 35) նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց Ի՝

1. <u>Զանգվածային լրատվամիջոցի հրապարակման համառոտ բովանդակությունը.</u>

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի (**այսուհետ՝ Պալատ**) մամուլի խոսնակի 07.03.2018թ. զեկուցագրով ներկայացվել է տեղեկություն www.hraparak.am լրատվական կայքի 2018թ. մարտի 6-ի ***«Ընդդիմադիր հայացքներով՝ իշխանամետ. փաստաբանները վիճել են, ինչել է հայհոյանք»*** վերտառությամբ նյութի (**այսուհետ՝ Հրապարակում**)[1] վերաբերյալ: Հրապարակման մեջ մասնավորապես նշվել է հետևյալը՝ *«Շուշանյանը նաև գրել էր. «Դեմքին նշմարվող ժպիտից դատելով՝ ժողովրդի իշխանությունն յուրացրած վարչախմբի դեմ ընդվզման նախապատրաստվող ընդդիմադիր «Երկիր Ծիրանի»-ի փոխնախագահ, համատեղությամբ այդ նույն վարչախմբի շահերը սպասարկող՝ Ժիրայր Սեֆիլյանի և «Սասնա Ծռերի» գործերով ներգրավված փաստաբաններիս նկատմամբ հաշվեհարդար իրականացնող Փաստաբանների պալատի խորհրդի անդամ Կարապետ Աղաջանյանը ինքն էլ շատ անլուրջ, արհամարհաբար և «հումորով» է վերաբերվում ընդվզման կոչին: Հիշեցնենք, որ մի քանի օր առաջ ՓՊ խորհուրդը՝ Կարապետ Աղաջանյանի նախագահությամբ նիստ էր արել, որտեղ որոշվել էր «Սասնա ծռերի» գործով դատավոր Արտուշ Գաբրիելյանի դիմումի հիման վրա պատասխանատվության ենթարկել փաստաբաններ Երվանդ Վարոսյանին եւ Լուսինե Սահակյանին, նկատողություն տալ: Շուշանյանի գրառումը մեծ արձագանք է գտել, ֆեյսբուքյան օգտատերերը հետաքրքրվում էին՝ այդ ինչպե՞ս է Աղաջանյանը «Երկիր Ծիրանի» կուսակցության փոխնախագահ, ըստ նրանց, ՓՊ-ն և դրա խորհուրդը գործող իշխանության ենթականերն են: Կարապետ Աղաջանյանը գրառմանը պատասխանել էր՝ նշելով, որ անհիմն, սուտ ինֆորմացիա է **<u>և գրել էր հայհոյախառն արտահայտություններ:</u>***»:

[1] https://www.hraparak.am/posts/5a9e6d5b4b0f5608e646209f/

12 մարտի 2018թ.
թիվ 113-Ա/ԿԳ-18053

Պալատի մամուլի խոսնակի զեկուցագրում ներկայացվել է նաև Ֆեյսբուք սոցիալական ցանցում Karo Aghajanyan անունով օգտատիրոջ՝ լատինատառ հայերենով նշված ընդհանրական արտահայտություններ, որոնք հավանաբար վերաբերում են Հրապարակմանը:

2. <u>Պալատի եզրահանգումը և որոշումը.</u>

Գտնում եմ, որ զանգվածային լրատվամիջոցի հրապարակման հիման վրա փաստաբան Կարապետ Աղաջանյանի նկատմամբ պետք է հարուցել կարգապահական վարույթ՝ հետևյալ պատճառաբանությամբ.

«Փաստաբանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի **(այսուհետ նաև Օրենք)** 39-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *փաստաբանը ենթակա է կարգապահական պատասխանատվության սույն օրենքի և փաստաբանի վարքագծի կանոնագրքի պահանջները խախտելու համար:*

Օրենքի 39.1-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ *փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու առիթներն են՝ .... զանգվածային լրատվամիջոցների հրապարակումները:*

Նույն հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ *կարգապահական վարույթ հարուցելու հիմքն է փաստաբանի արարքի մեջ սույն օրենքի կամ փաստաբանի վարքագծի կանոնագրքով նախատեսված պահանջների խախտման հատկանիշների առերևույթ առկայությունը:*

Հրապարակման մեջ նշված «...*Կարապետ Աղաջանյանը գրառմանը պատասխանել էր՝ նշելով, որ անհիմն, սուտ ինֆորմացիա է* ***<u>և գրել էր հայհոյախառն արտահայտություններ</u>***» տեղեկությունը և Ֆեյսբուք սոցիալական ցանցում Karo Aghajanyan անունով օգտատիրոջ՝ լատինատառ հայերենով նշված ընդհանրական արտահայտությունները փաստաբան Կարապետ Աղաջանյանի կողմից կատարված լինելու փաստը հաստատվելու դեպքում, փաստաբան Կարապետ Աղաջանյանի վարքագիծը կարող է հակասել Պալատի ընդհանուր ժողովի կողմից 11.02.2012թ. թիվ 1/4-Լ որոշմամբ հաստատված Փաստաբանի վարքագծի կանոնագրքի (**այսուհետ՝ Կանոնագիրք**) 2.2.3 ենթակետի պահանջին:

Կանոնագրքի 2.2.3 ենթակետի համաձայն՝ ***մասնագիտական, հասարակական, հրապարակախոսական և այլ բնագավառներում իր գործունեությամբ փաստաբանը պետք է նպաստի փաստաբանի մասնագիտության բովանդակության և հասարակական կոչման նկատմամբ հարգանքի ձևավորմանն ու ամրապնդմանը:***

Նշված կանոնից հետևում է, որ փաստաբանը մասնագիտական, հասարակական, հրապարակախոսական և այլ բնագավառներում իր գործունեության ընթացքում չպետք է կատարի այնպիսի արարք, որը կարող է վնասել փաստաբանի մասնագիտության բովանդակության և հասարակական կոչման նկատմամբ հարգանքի ձևավորմանն ու ամրապնդմանը:

Կանոնագրքի 1.1 ենթակետը նախանշում է նաև փաստաբանի դերը հասարակության մեջ, մասնավորապես՝ «***<u>Իրավունքի գերակայության հանդեպ ունեցած հարգանքի վրա հիմնված հասարակության մեջ փաստաբանը հատուկ դեր է ստանձնում:</u>*** *Փաստաբանի պարտականությունները չեն սկսվում և ավարտվում միայն հանձնարարականների բարեխիղճ կատարմամբ: ....*

Փաստաբանի մասնագիտական գործունեության հանդեպ հարգանքը կարևոր պայման է հասարակության մեջ իրավունքի գերակայության և ժողովրդավարության համար:

<u>Փաստաբանի գործունեությունը, հետևաբար, իր վրա դնում է բազմազան իրավական և բարոյական պարտավորություններ (երբեմն իրար հակասող)</u>՝

- վստահորդի նկատմամբ;

- դատարանների և այլ իրավապահ մարմինների առաջ, որտեղ փաստաբանը պաշտպանում է գործը և հանդես է գալիս վստահորդի անունից;

- իրավաբանի մասնագիտության հանդեպ ընդհանրապես և այդ ոլորտի յուրաքանչյուր անդամի նկատմամբ մասնավորապես;

- հասարակության նկատմամբ, որի համար ազատ և անկախ մասնագիտության առկայությունը՝ համակցված այդ մասնագիտությանը վերաբերող կանոնների նկատմամբ հարգանքով, Մարդու իրավունքների պաշտպանության կարևոր միջոց է՝ ի նպաստ Հայաստանի Հանրապետության հզորության և հասարակության այլ շահերի:»:

Սույն որոշմամբ կարգապահական վարույթը հարուցվում է փաստաբան Կարապետ Աղաջանյանի կողմից փաստաբան Մուշեղ Շուշանյանի հետ համացանցում բանավեճի ընթացքում ընդհանրական հայհոյախառն արտահայտություններ կատարելու վարքագիծը ստուգելու նպատակով:

* * *

Միաժամանակ, հարկ է արձանագրել, որ փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելն ինքնին չի նշանակում, որ փաստաբանը թույլ է տվել կարգապահական խախտում և այդ հարցի վերջնական պատասխանը կարող է տրվել միայն կարգապահական վարույթի իրականացման արդյունքում՝ Պալատի խորհրդի համապատասխան որոշմամբ:

Հաշվի առնելով, որ կարգապահական վարույթ հարուցելու հարցը քննարկվում է զանգվածային լրատվամիջոցի հրապարակման առիթով, գտնում եմ, որ սույն որոշումը պետք է նաև հրապարակել Պալատի կայքէջում:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Փաստաբանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 39-րդ հոդվածի, 39.1 հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի, 39.1 հոդվածի 4-րդ մասի, 39.3 հոդվածի, Կանոնագրքի հավելվածը հանդիսացող «Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման» կարգի 10-րդ հոդվածի պահանջներով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի՝

1. Փաստաբան Կարապետ Աղաջանյանի (արտոնագիր թիվ 35) նկատմամբ հարուցել կարգապահական վարույթ՝ Կանոնագրքի 2.2.3 ենթակետի պահանջի խախտման հատկանիշներով (կարգապահական գործ թիվ ԿԳ-18053):

2. Հանձնարարել Պալատի աշխատակազմի ղեկավարին՝

– ***կարգապահական գործը սահմանված կարգով հանձնել հերթական***

կարգապահական գործ նախապատրաստող փաստաբանին.

– ***սույն որոշման մեկական օրինակ ուղարկել դիմողին և փաստաբան Կարապետ Աղաջանյանին՝ պարզաբանելով նրա «Փաստաբանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 39.2 հոդվածով նախատեսված իրավունքները.***

– ***ապահովել սույն որոշման հրապարակումը Պալատի կայքէջում:***

Հայաստանի Հանրապետության
փաստաբանների պալատի նախագահ՝ Արա Զոհրաբյան

12 մարտի 2018թ.
թիվ 113-Ա/ԿԳ-18053
ք. Երևան